

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏ
ՀԱՆՐԱՅԻՆ ՊԱՇՏՊԱՆԻ ԳՐԱՍԵՆՅԱԿ
ПАЛАТА АДВОКАТОВ РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ
КАНЦЕЛЯРИЯ ОБЩЕСТВЕННОГО ЗАЩИТНИКА
The Public Defender's Office**

ՀՀ Ք.Երևան, Չարիյան 2, ԲԱ, Գ.Երևան, Կլ.Յակոբյան 2
№ 117 24.02.2016 թ

Փ 10 604 605 (ֆաքս)

E-mail: pashtpan@advocates.am

*ՀՀ Սյունիքի մարզպետարանի աշխատակազմի
քաղաքաշինության վարչության տրանսպորտի
և ճանապարհաշինության բաժնի պետ՝
Պարոն Ս Աղաբեկյանին*

Հարգելի պարոն Ս Աղաբեկյան

ՀՀ փաստաբանների պալատի հանրային պաշտպանի գրասենյակի կողմից հանրային պաշտպանությունն արդյունավետ կազմակերպելու համար անհրաժեշտ են մի քանի տվյալներ: Մասնավորապես, անհրաժեշտ են մարզերի քաղաքներից Երևան քաղաք, միջմարզային և մարզի քաղաքների միջև գործող ավտոմոբիլային ուղևորափոխադրումների երթուղիների, չվացուցակների և ուղեվարձերի վերաբերյալ տվյալներ:

Ելնելով վերոգրյալից

խնդրում ենք հայտնել

1. Սյունիքի մարզկենտրոնից ի՞նչ հասարակական տրանսպորտ է գործում Երևան քաղաք, ի՞նչ չվացուցակով, որքա՞ն է կազմում մեկ ուղևորի ուղեվարձը:
2. Սյունիքի մարզի քաղաքներից ի՞նչ հասարակական տրանսպորտ է գործում Երևան քաղաք, ի՞նչ չվացուցակով, որքա՞ն է կազմում մեկ ուղևորի ուղեվարձը:
3. Սյունիքի մարզկենտրոնից ի՞նչ հասարակական տրանսպորտ է գործում Սյունիքի մարզի քաղաքներ, ի՞նչ չվացուցակով, որքա՞ն է կազմում մեկ ուղևորի ուղեվարձը:
4. Սյունիքի մարզկենտրոնից և Սյունիքի մարզի քաղաքներից ի՞նչ հասարակական տրանսպորտ է գործում Սյունիքի մարզին հարակից մարզեր, ի՞նչ չվացուցակով, որքա՞ն է կազմում մեկ ուղևորի ուղեվարձը:

*Հարգանքով,
ՀՀ փաստաբանների պալատի
ՀՊԳ ղեկավար՝
Մելանյա Առուստամյան*

1649
1 03 2016թ
[Ստորագրություն]



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ

3301 ք.Կապան, Գ.Նժդեհի 1, հեռ. Ֆաքս (010) 287830, (0285) 52443, էլ-հասցե՝ syunik@mta.gov.am

“ 4 ” Տարբերի 2016թ. № 03/939-16
Ձեր 26.02.2016թ. № 117

« Հաստատարանների պալատի
հանրային պաշտպանի գրասենյակի
ղեկավար Մ.Առուստամյանին

Հարգելի տիկին Առուստամյան

Ի պատասխան Ձեր հարցման հայտնվում է հետևյալը.

1-ին և 2-րդ կետերի վերաբերյալ ավելի ստույգ տեղեկատվություն ստանալու համար, առաջարկվում է դիմել «Ստանսպորտի և կապի նախարարություն, քանի որ համաձայն «Կառավարության 2011թվականի օգոստոսի 16-ի N 762 որոշման կարգի պահանջների՝ միջնարգային երթուղիների մրցույթները սահմանված կարգով կազմակերպում և անցկացնում է «Ստանսպորտի և կապի նախարարությունը:


3-րդ կետի վերաբերյալ հայտնվում է, որ ուղևորահոսքի բացակայության պատճառով մարզկենտրոնից հասարակական տրանսպորտը գործում է միայն դեպի Քաջարան և Գորիս քաղաքներ՝ հետևյալ չվացուցակով.

Կապան-Քաջարան-մեկնումը ժամը՝ 8.00, 11.00, 14.00, 18.30 և հետադարձը՝ 08.40, 11.40, 15.30, 19.10: Մեկ ուղևորի փոխադրավարձը կազմում է 300 դրամ:

Կապան-Գորիս մեկնումը՝ 9.00, 12.00 և հետադարձը 12.00, 15.00: Մեկ ուղևորի փոխադրավարձը կազմում է 1500 դրամ:

4-րդ կետի վերաբերյալ հայտնվում է, որ մարզկենտրոնից և մարզի քաղաքներից դեպի այլ մարզեր հասարակական տրանսպորտ չի գործում:

ՀԱՐԳԱՆՔՈՎ՝



Ռ. ՂԱԶԱՐՅԱՆ

Կատարող՝ Ռ.Ավետիսյան
Հեռ. /0285/ 2-66-30
Էլ. հասցե՝ syunik.qaghshin@mail.ru